Արձանագրություն N 2

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված թիվ ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-26/26 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հանձնաժողովի նիստի

ք. Երևան **Մեկնարկ՝ «26» « հունիսի» 2026թ.**
Ժամը՝ 12:00
Ավարտ՝ «10» « հուլիսի» 2026թ.
Ժամը՝ 16:30

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ)՝ Արմեն Սիմոնյան

անդամներ՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային և ջրային տրանսպորտի քաղաքականության վարչության պետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)՝ Արտակ Պապյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային և ջրային տրանսպորտի քաղաքականության վարչության պետի տեղակալ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)՝ Տիգրան Գասպարյան

ՀՀ ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ) Ռոբերտ Ղարսոյան

ՀՀ ազգային անվտանգության ծառայության ՍՋ ներկայացուցիչ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ) Ֆելիքս Իփակյան

ՀՀ ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ) Դավիթ Սարգսյան

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գնումների կազմակերպման և վարչատնտեսական ապահովման վարչության պետ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ) Խաչիկ Սողոմոնյան

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերության գլխավոր ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)՝ Արամ Եդիգարյան

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերության ենթակառուցվածքի տնօրինության պետի առաջին տեղեկալ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)՝ Արմեն Մկրտչյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավաբան (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ) Աննա Ավագյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ֆինանսական, հաշվապահական հաշվառման և համայնքային բյուջեների վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ) Աիդա Բաբուջյան

Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)՝ Անի Բաղայան

1. Տեղեկատվություն՝ ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-26/26 ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

1.1 **ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-26/26** ծածկագրով հրատապ բաց մրցույթի հայտերը էլեկտրոնային եղանակով www.armeps.am կայքի միջոցով բացվել են **2026 թվականի հունիսի 26-ին՝ ժամը 12:00-ին:**

2. Տեղեկատվություն՝ հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ.

2.1 Հայտեր են ներկայացվել հետևյալ մասնակիցների կողմից.

N	Մասնակիցների անվանումները	Հասցե /ՀՎՀՀ/	Էլ. փոստ
1	«Integra Construction KZ» ՍՊԸ	Ղազախստանի Հանրապետություն, ք. Աստանա, Եսիլ շրջան, ԴԻՆՄՈՒՀԱՄԵԴ ԿՈՆԱԵՎ, 12/1,16 /050840000334/	a.abilkassova@inconkz.com
2	AO «BOSHTRANSLOYIHA»	Ուզբեկստանի Հանրապետություն, ք Տաշքենդ, Նուկուս փող. 23ա / 201052150/	boshtrans@gmail.com

3. Տեղեկատվություն՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ

3.1 Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթներում առկա էին հրավերով պահանջվող փաստաթղթերը:

4. Տեղեկատվություն՝ յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

4.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Չափաբաժին 1՝ «Գյումրի-Ախուրիկ-Թուրքիայի սահման» երկաթուղային հատվածի վերակառուցման աշխատանքների նախագծի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություններ

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր
1	«BOSHTRANSLOYIHA» AO	785 000 USD	0	785 000 USD
2	«Integra Construction KZ» ՍՊԸ	1 511 715 800 AMD	302 343 160	1 814 058 960 AMD

Չափաբաժին 2՝ «Երասխ-Նախիջևանի սահման» երկաթուղային հատվածի վերակառուցման աշխատանքների նախագծի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություններ

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր
1	«BOSHTRANSLOYIHA» AO	206 000 USD	0	206 000 USD
2	«Integra Construction KZ» ՍՊԸ	389 266 800	77 853 360	467 120 160

5. Տեղեկատվություն՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու վերաբերյալ

5.1 AO «BOSHTRANSLOYIHA» կազմակերպության կողմից հայտը՝ այդ թվում գնային առաջարկը, ներկայացվել է միայն ռուսերեն լեզվով:

5.2 «Integra Construction KZ» կազմակերպության կողմից, որը հանդիսանում է Ղազախստանի Հանրապետության ռեզիդենտ, գնային առաջարկում՝ Հավելված 2-ում, լրացվել է ավելացված արժեք սյունակը:

6. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-26/26 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

6.1 Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետով՝ հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության gnumner.am կայքում գործող տեղեկագրի «Հաճախ ստացվող հարցադրումների վերաբերյալ տրամադրված պարզաբանումներ» բաժնում հրապարակած՝ «Պատվիրատուների կողմից տրված հարցեր» ենթաբաժնի 24-րդ և «Մասնակիցների կողմից տրված հարցեր» ենթաբաժնի 39-րդ կետերը, այն է՝ հայտի (ներառում է մասնակցի առաջարկն ընդգրկող բոլոր փաստաթղթերը), հայերեն լեզվով ներկայացումը պարտադիր է, իսկ անգլերեն կամ ռուսերեն լեզվով հայտի ներկայացումը մասնակիցն ապահովում է ըստ ցանկության:

Համաձայն ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի, **ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-26/26** ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի ՄԱՍ II 5.2 կետի՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 40-րդ դրույթներով՝ գնահատող հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան և հիմք ընդունելով վերոնշյալ իրավական հիմքերը՝

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. AO «BOSHTRANSLOYIHA» և «Integra Construction KZ» ընկերությունների կողմից ներկայացված հայտերը ամբողջությամբ գնահատել անբավարար և մերժել:
2. ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-26/26 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը. Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:
3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

7 Գնահատող հանձնաժողովի անդամները գնահատեցին ներկայացված հայտերը և դրանց գնահատման արդյունքներն արտացոլեցին գնահատման թերթիկներում:

8. Տեղեկատվություն՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

8.1 Օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

8.2 Սույն ընթացակարգի վերաբերյալ հիմնավորումներ չեն տրվել:

9. Տեղեկատվություն՝ հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

9.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 8, դեմ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	**Արմեն Սիմոնյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Արտակ Պապյան**	.....
	Տիգրան Գասպարյան	.....
	Ռոբերտ Ղարսոյան	.....
	Ֆելիքս Իփակյան	.....
	Դավիթ Սարգսյան	.....
	Խաչիկ Սողոմոնյան	.....
	Արամ Եդիգարյան	.....
	Արմեն Մկրտչյան	.....
	Աննա Ավագյան	.....
	Աիդա Բաբուջյան	.....
Քարտուղար՝	**Անի Բաղալյան**	.....